ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, 091 435136 Է. հասցե՝ foi@foi.am,
www.foi.am, www.ogp.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

10.08.2015թ
258-2-ի

ՀՀ կրթության և գիտության նախարար
պարոն Արմեն Աշոտյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Աշոտյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Ինֆորմացիայի ազատության կենտրոն հասարակական կազմակերպությունն իրականացնում է Բաց կառավարման գործընկերություն միջազգային նախաձեռնության շրջանակներում Հայաստանի Գործողությունների ծրագրի (http://www.ogp.am/u_files/file/commitments_OGP_AP2_ARM.pdf) իրականացման մոնիտորինգ:

Մոնիտորինգի անցկացման համար խնդրում ենք տրամադրել Գործողությունների ծրագրի իններորդ հանձնառության իրականացմանը վերաբերող հետևյալ տեղեկությունները.

1. Ե՞րբ է ստեղծվել ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ընտրության կարգում փոփոխությունների կատարելու նպատակով աշխատանքային խումբը (խնդրում ենք տրամադրել Խմբի ստեղծման իրավական ակտը, խմբի անդամների անունները, Խմբի հանդիպումների արձանագրությունները):
2. Ե՞րբ և ի՞նչ լրամշակումներ են արվել ՀՀ հանրակրթական պետական ուսումնական հաստատության կառավարման խորհրդի ընտրության կարգում. խնդրում ենք տրամադրել լրամշակված կարգի օրինակը:
3. Որտե՞ղ է այն հրապարակվել:
4. Ե՞րբ է մշակվել «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը և հաստատվել:
5. Որտե՞ղ է հրապարակվել «Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարեկան բյուջեի պլանավորման և բյուջեի տարեկան ծախսերի հաշվետության կարգը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:
Շուշան Դոյդոյան
ԻԱԿ նախագահ